ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի որոշում 2018թ. հունվարի 24-ի № 3 նիստի

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՄԵԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ՝ կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողների մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Թ. Գրիգորյան

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2019թ. հունվարի 13-ի

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՄԵԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Ուսանողներին մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման» կարգը

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

Հաստատված է ՀՀ ԿԳՆ « Արարատի
պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի 2018թ.
հունվարի 8-ի N 4 նիստում
ՀՀ ԿԳՆ ԱՊՔ-ի մանկավարժական խորհրդի
նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ-ում գործող նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) մեկ այլ համապատասխան մակարդակի կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունում ուսանողների տեղափոխման կարգը՝ հանձինս ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի:
2. Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. հոկտեմբերի 1-ի N1455-Ն հրամանի՝ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում ուսանողի տեղափոխման գործընթացն այլ ուսումնական հաստատություն իրականացվում է երկու ուսումնական հաստատությունների տնօրենների համաձայնությամբ:
3. Տեղափոխման գործընթացն իրականացվում է չորրորդ կիսամյակն ավարտելուց հետո, եթե տվյալ կրթական ծրագրի իրականացման ժամկետները համապատասխանում են՝ առկա ուսուցման բաժնից հեռակա ուսուցման բաժին հիմնական կրթության հիմքով ընդունված ուսանողի համար:
4. Տեղափոխման ընթացքում մասնագիտության փոփոխություն թույլատրվում է միայն ուսանողի կողմից նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների /մոդուլների/ տարբերությունները 8-ը չգերազանցելու պայմանով:
5. Նախընտրած մասնագիտության գծով հաստատված ուսումնական պլանով ուսանողի ուսումնառություն չանցած, չուսումնասիրած կամ ամփոփիչ ստուգում չանցած առարկաները /մոդուլները/ և դրանց ժամաքանակների երեսուն և ավելի տոկոս կազմող տարբերությունները համարվում են ակադեմիական տարբերություններ: Վերջիններիս ցանկը և ուսանողի կողմից դրանց հանձնման անհատական ժամանակացույցը կազմվում է ընդունող ուսումնական հաստատության կողմից՝ հիմք ընդունելով ուսումնական պլանը: Հանձնման առավելագույն ժամկետը մեկ ամիս է: Տեղափոխումը կարող է կատարվել, եթե դրա արդյունքում համապատասխան մասնագիտության տվյալ տարվա համար սահմանված ընդունելության տեղերի ընդհանուր թիվը պահպանվում է:
6. Հավաստագրված ոչ պետական ուսումնական հաստատությունից ուսանողի տեղափոխումը պետական ուսումնական հաստատություն կարող է կատարվել նախարարության թույլտվությամբ՝ ընդունող ուսումնական հաստատության տնօրենի ներկայացմամբ:

7. Ուսումնական հաստատությունը յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում ուսանողների տեղափոխման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով տեղափոխման հիմքը, կրթական ծրագիրը, ուսուցման ձևը, մասնագիտությունը:

II ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

8. Ուսանողը տեղափոխման մասին դիմում է ներկայացնում իր ուսումնական հաստատության տնօրենին՝ նրա գրավոր համաձայնությունը ստանալու համար: Տեղափոխման մասին ուսանողից դիմումն ընդունվում է ուսումնական կիսամյակը սկսելուն նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

   Տնօրենը եռօրյա չամկետում գրավոր պատասխանում է ուսանողին՝ կցելով ակադեմիական տեղեկանք կամ մերժման դեպքում՝ դրա փաստարկված հիմնավորումները:

9. Ուսանողը դիմում է, որ ցանկանում է տեղափոխվել և ներկայացնում է՝
   1) տեղափոխման մասին դիմում՝ տնօրենի համաձայնության նշագրումով,
   2) ակադեմիական տեղեկանք,
   3) եթե առկա է արտոնություն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված, վերջինիս վերաբերյալ տեղեկանք կամ հավաստող փաստաթուղթ:
   Անվճար ուսուցման համակարգում ուսումնառած ուսանողի դեպքում կրթությունը կազմակերպվում է վճարովի հիմունքներով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում արտոնություն ունեցող ուսանողների, որոնց կրթությունը շարունակվում է անվճար հմունքներով, ինչպես նաև, եթե տվյալ տարվա համար սահմանված տեղերի շրջանակում նույն մասնագիտության համար վճարովի տեղ չի սահմանվել, միայն անվճար է:
10. Տնօրենը, համաձայնության դեպքում տալիս է ուսանողի ընդունման ժամանակավոր հրաման, որում նշվում են ակադեմիական տարբերությունների ցանկը և դրանց մարման անհատական ճամանակացույցը: Մինչև տեղափոխման գործընթացի ավարտը ուսանողը կարող է կցագրվել համապատասխան խմբում և թույլատրել ուսումնական պարապմունքներին:
11. Ակադեմիական տարբերությունների բացակայության կամ դրանք դրական գնահատականներով հանձնելու դեպքում ընդունող ուսումնական հաստատության տնօրենն ուսանողին տալիս է համապատասխան տեղեկանք, որն ուսանողը ներկայացնում է իր ուսումնական հաստատության տնօրենին, ով եռօրյա ժամկետում հրամանով ամրագրում է ուսանողի տեղափոխումը: Ուսումնական հաստատությունը ուսանողին հանձնում է.

1) տեղափոխման մասին հրամանի պատճենը,

2) կրթության մասին վկայող փաստաթղթի բնօրինակ,

3) այլ փաստաթղթեր /առկայության դեպքում:

Նախկին ուսումնական հաստատությունը պահում է ուսանողի անձնական գործը, որը ներառում է՝

1) ուսանողի տեղափոխման մասին հրամանը,

2) 11-րդ կետով սահմանված տեղեկանքը,

3) ուսանողի կրթության մասին վկայող փաստաթղթի պատճենը,

4) ուսանողական տոմսը և այլ փաստաթղթերի պատճենները:

12. Ընդունող ուսումնական հաստատության տնօրենը համապատասխան փաստաթղթերի բնօրինակները ստանալուց հետո եռօրյա ժամկետում հրամանագրում է ուսանողին:

13. Ընդունող ուսումնական հաստատությունում կազմվում է ուսանողի նոր անձնական գործ, որում ընդգրկվում են ուսանողի կրթության մասին վկայող փաստաթուղթը, ակադեմիական տեղեկանքը, ընդունման հրամանի պատճենը և ուսանողի հետ կնքած պայմանաքիրը: Ուսանողին տրվում է նոր ուսանողական տոմս և նրա հետ կնքած պայմանագրի երկրորդ օրինակը: